**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ**
**ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

# ՀՐԱՄԱՆ

« 20 » հունվար 2026թ. N 8-Ա

## ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի և նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ և հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանքների առկայությունը, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 2021 թվականի նոյեմբերի 05-ի թիվ 151-Լ հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտե» պետական կառավարչական հիմնարկի կանոնադրության 11.1 կետի 5-րդ ենթակետի պահանջներով՝ ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

| Գնման ընթացակարգի | | | | Մասնակցի | | | | Պատվիրատուի անվանումը | Իրավական հիմք | Այլ անհրաժեշտ տեղեկատվություն՝ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ծածկագիրը | չափաբաժնի | | | Անվանումը | ՀՎՀՀ | Գործունեության հասցեն | գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու հանգամանք ների առաջացման ամսաթիվը | | | |
| | համարը | անվանումը | գնման գինը /ՀՀ դրամ/ | | | | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| ՀՀ ՔԿ ԳՀԾՁԲ-ԱԼ-26/1 | 1 | ավտոմեքենաների լվացման ծառայություններ | 1 000 000 | «ԷՍԿԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | 09433194 | ք. Երևան, Սունդուկյան 17 | 07.01.2026թ. | ՀՀ քննչական կոմիտե | ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերություն և 19-րդ ենթակետ: «ԷՍԿԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին փոխկապակցված անձը /«ԼԻԴԵՐ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ –ն՝ 26.11.2024 - 26.11.2026թթ ժամանակահատվածով | «ԷՍԿԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն ՀՀ ՔԿ ԳՀԾՁԲ-ԱԼ-26/1 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2.3 կետի համաձայն Հավելված 1 Դիմում-հայտարարությամբ հայտարարել և հավաստել է, որ իր հետ փոխկապակցված անձինք բավարարում են հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին: |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | գտնվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, և այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում:/ | Սակայն մասնակցի ներկայացրած դիմում-հայտարարության գնահատման արդյունքում մերժվել է հայտը, քանի որ «ԷՍԿԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող: |

**Գ. Խաչատրյան**

Восстановимая подпись

Ստորագրող
ԳԵՎՈՐԳ ԽԱՉԱՏՐՅԱՆ
2601820470

X

Подписано: KHACHATRYAN GEVORG 2601820470